

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի տեսական մասի բովանդակության պատրաստման համար անհատ-խորհրդատուի մրցույթ

02 մայիսի 2018թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի տեսական մասի բովանդակության պատրաստման համար անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթ:

Անհատ-խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ի համապատասխան չափորոշչային փաստաթղթերը, ինչպես նաև առկա և ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազան, «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի հայեցակարգային ծրագիրը,
- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ում ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված և իրականացված հեռաուսուցման դասընթացի կազմակերպման ու իրականացման գործընթացների հայեցակարգային ծրագիրը և ուսումնական նյութերը,

- ✓ ուսումնական նյութերի մշակման աշխատանքներն իրականացնել՝ համագործակցելով բազմամասնագիտական թիմի մյուս խորհրդատուների հետ,
- ✓ ուսումնասիրել «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի տեղական և միջազգային տեսական նյութեր,
- ✓ համագործակցել դասընթացի որակի ապահովման մասնագետի հետ՝ 30 շահառուների կարիքների և կարողությունների ուսումնասիրման գործընթացում,
- ✓ համագործակցել դասընթացի որակի ապահովման մասնագետի հետ՝ մասնակցելով դասընթացի արդյունավետության գնահատման աշխատանքներին,
- ✓ մշակել «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի տեսական պարապմունքների բովանդակության և մասնագիտական տերմինների բառարան-տեղեկատուի նախնական տարբերակները,
- ✓ վերանայել և բարելավել ուսումնական նյութերի տեսական պարապմունքների բովանդակությունը և բառարան-տեղեկատուն՝ նկատի առնելով շահառուների շրջանում դասընթացի որակի ապահովման մասնագետի մշտադիտարկման և ՇՊՀ-ի ղեկավար կազմի հետ քննարկման արդյունքները:

Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.

№	Անվանումը	Պահանջը	Միավորը
1.	Որակավորում	✓ Մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ:	20
2.	Ընդհանուր աշխատանքային փորձ	✓ դասավանդման փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/, ✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ, ✓ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու պրակտիկ աշխատանքային փորձը ցանկալի է:	40
3.	Հատուկ	✓ մասնագիտական դասընթաց(ներ)ի	40

	աշխատանքային փորձ	բովանդակության մշակման փորձ, ✓ գիտելիքների ստուգման գործիքակազմի մշակման ու կիրառման փորձը ցանկալի է, ✓ ռուսերենի և անգլերենի իմացությունը ցանկալի է:	
	Ընդամենը՝		100

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 3,5 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), shirakhovhannisyan@mail.ru, հեռախոս՝ 0312 2 84 69:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թվականի մայիսի 16-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ _____

Հեռ. _____

Էլ. Փոստ _____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում

անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ _____ / _____ /

(ստորագրություն)

« ____ » _____ 2018 թ.